ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 07/19/200-20
«16» 01 2020 թ.

<<Դամկար>> ՍՊԸ-ի տնօրեն
պարոն. Գ. ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Նարիբեկյան

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության և «Դամկար » ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» գնման պայմանագրի (այսուհետեւ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր ընկերությունը համաձայն վերոգրյալ պայմանագրի հավելված 1-ի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով պետք է մինչև 20.12.2019թ-ը մատակարարեր թվով 100 սեղան, որոնք սակայն չի մատակարարել:

Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն Գնորդը իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, եթե մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք կամ խախտվել են ապրանքի մատակարարման ժամկետները:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, հիմք ընդունելով 2019 թվականի դեկտեմբերի 10-ին կնքված թիվ «ԲՏԱՆ-ԳՀԱՊՁԲ-2019/8-2» գնման պայմանագրի 2.1.7 կետը, 2020 թվականի հունվարի 16-ից որոշեց միակողմանի ամբողջությամբ լուծել վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ <<Դամկար>> ՍՊԸ -ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական «900005000758» հաշվեհամարին փոխանցել գանձման ենթակա 450 000 ՀՀ դրամը որպես տուժանք՝ պայմանագրի կատարման ապահովում (պայմանագրի ընդհանուր գումարի 10%):

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Վազգեն Սարգսյան 3/3, հեռ.՝ (37410) 590001, էլ. փոստ՝ minister@mtcit.am

Հարկ եմ համարում նաև նշել, որ համաձայն ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետի՝ Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ ծանուցումը սահմանված կարգով կհրապարակվի www.procurement.am պաշտոնական տեղեկագրում:

Միաժամանակ հայտնում եմ, որ հնարավոր տույժերի և տուգանքների վերաբերյալ լրացուցիչ կտեղեկացվի:

Հարգանքով՝

/ Շ. ՄԵԺԼՈՒՄՅԱՆ

1/16/2020

X

VERIFIED OCSP 1/16/2020 16:34:21 GMT+4

Signed by: ALEKSANYAN GEVORG 2604770393

Գնումների բաժին՝
Հեռ. 010 590048